ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 11-Լ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ոստիկանության գվարդիայի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ոստիկանության գվարդիայի հրամանատարին՝ ոստիկանության գվարդիայի՝ սույն հրամանով հաստատված հավելվածի 21-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը ՀՀ մարզերում ապահովել ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության տարածքային ստորաբաժանումների ծառայողների ներգրավմամբ՝ մինչև ոստիկանության գվարդիայի՝ Հայաստանի Հանրապետության մարզերի սպասարկումն իրականացնող ստորաբաժանումների ամբողջական ձևավորումը:
3. Ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետին՝ սույն հրամանի 2-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

Ոստիկանության գնդապետ **Արամ Ղազարյան**

31.10.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին
գործերի նախարարի տեղակալի
2025թ. հոկտեմբերի «31»-ի N 11 -Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոստիկանության գվարդիան (այսուհետ՝ Գվարդիա) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կառուցվածքային ստորաբաժանում է՝ գլխավոր վարչության կարգավիճակով:

2. Գվարդիայի գործունեությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքների, այլ օրենքների, սույն կանոնադրության, ինչպես նաև Գվարդիայի գործունեությունը կարգավորող-այլ իրավական ակտերի հիման վրա:

3. Գվարդիայի անվանումն է՝

1) հայերեն՝ Ոստիկանության գվարդիա.

2) ռուսերեն՝ Гвардия полиции.

3) անգլերեն՝ Police Guard.

4) ֆրանսերեն՝ Garde de Police:

4. Գվարդիան ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն ու օտար լեզուներով անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Գվարդիան կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

5. Գվարդիայի աշխատակիցներն են Ոստիկանության ծառայողները, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք:

6. Գվարդիայի տեղակայման վայրերն են՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26 և Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մկրտիչ Սարգսյան, 1/1:

2. ԳՎԱՐԴԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գվարդիայի գործունեության նպատակն է պաշտպանել անձի իրավունքները և ազատությունները, ինչպես նաև ապահովել հասարակության և պետության անվտանգությունը:

8. Գվարդիայի խնդիրներն են՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը.

2) պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությունը, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը.

3) ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը.

4) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը.

5) քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը:

3. ԳՎԱՐԴԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Գվարդիան կազմված է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից:

10. Գվարդիայի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման վարչությունը.

2) պետական պահպանության կազմակերպման վարչությունը.

3) մոնիթորինգի վարչությունը.

4) ծառայության ապահովման վարչությունը:

11. Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման վարչության կազմում ընդգրկված են՝

1) ծառայության կազմակերպման բաժինը.

2) ծառայության պատրաստվածության բաժինը.

3) հատուկ մարտավարական գործողությունների կազմակերպման բաժինը.

4) բանակցային բաժինը:

12. Պետական պահպանության կազմակերպման վարչության կազմում ընդգրկված են՝

1) օբյեկտների պետական պահպանության և հատուկ բեռների ուղեկցման անվտանգության ապահովման բաժինը.

2) տեխնիկական միջոցներով պահպանության կազմակերպման բաժինը.

3) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցման բաժինը.

4) դատավարության մասնակիցների պաշտպանության բաժինը.

5) շնավարժության բաժինը:

13. Մոնիթորինգի վարչության կազմում ընդգրկված են՝

1) մոնիթորինգի և վերլուծության բաժինը.

2) ծառայությունների ստանդարտացման և կատարելագործման բաժինը:

14. Ծառայության ապահովման վարչության կազմում ընդգրկված են՝

1) սպառազինության և հատուկ տեխնիկայի ապահովման բաժինը.

2) բժշկական և սոցիալ-հոգեբանական աջակցության ապահովման խումբը.

3) հերթապահ ծառայությունը.

4) պատվոպահակային ծառայության բաժինը.

15. Գվարդիայի տարածքային ստորաբաժանումներն են՝

1) հատուկ սպառազինության և մարտավարության գունդը.

2) հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման առաջին գունդը.

3) հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման երկրորդ գունդը.

4) կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության գունդը.

5) հայկական ատոմային էլեկտրակայանի և ռադիոակտիվ թափոնների պահպանության գումարտակը.

6) ուղեկցող սպայական վաշտը.

7) Արաբկիրի պահպանության բաժինը.

8) Մալաթիայի պահպանության բաժինը.

9) Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժինը.

10) Շենգավիթի պահպանության բաժինը.

11) Էրեբունու պահպանության բաժինը.

12) Նոր Նորքի պահպանության բաժինը.

13) Մաշտոցի պահպանության բաժինը.

14) Կենտրոնի պահպանության բաժինը.

15) Գյումրու պահպանության բաժինը.

16) Վանաձորի պահպանության բաժինը.

17) Թումանյանի պահպանության բաժինը.

18) Իջևանի պահպանության բաժինը.

19) Հրազդանի պահպանության բաժինը.

20) Աշտարակի պահպանության բաժինը.

21) Արտաշատի պահպանության բաժինը.

22) Վաղարշապատի պահպանության բաժինը.

23) Եղեգնաձորի պահպանության բաժինը.

24) Կապանի պահպանության բաժինը.

25) Գորիսի պահպանության բաժինը.

26) Սևանի պահպանության բաժինը.

27) Կոտայքի պահպանության բաժինը:

4. ԳՎԱՐԴԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման վարչությունը՝

1) իրականացնում է Գվարդիայի՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. ապահովում է հասարակական վայրերում (փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում, երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում և այլն) պարեկապահակետային ծառայության իրականացումը, այդ թվում՝ վերակարգերի տեղորոշման գործընթացի կազմակերպմամբ.

բ. մշակում է Գվարդիայի՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պլանները և մարտավարամասնագիտական փաստաթղթերը, համակարգում է նշված փաստաթղթերով նախատեսված միջոցառումների իրականացումը.

գ. համակարգում է հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) բնականոն ընթացքի ապահովման, ինչպես նաև դրանց մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության գործընթացը.

դ. համակարգում է հավաքների ազատության ապահովման շրջանակներում Ոստիկանության պարտականությունների իրականացումը.

ե. մշակում է հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) ընթացքում մասնագիտացված հաղորդակցության մեթոդներ.

զ. մշակում է հնարավոր զանգվածային անկարգությունների կանխման, կասեցման, ինչպես նաև զինված անձանց վնասազերծման գործողությունների մեթոդաբանություն և համակարգում է այդ գործողությունների իրականացումը.

է. մշակում է հանցանքների, վարչական իրավախախտումների կանխման և խափանման մեթոդաբանություն և հսկում դրա իրականացումը.

ը. կազմակերպում է հանցանքների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման, հայտնաբերման ու բացահայտման նպատակով Ոստիկանության այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցությունը.

թ. համակարգում է Գվարդիայի ծառայողների՝ հակաահաբեկչական գործողությունների իրականացմանը մասնակցությունը.

2) կազմակերպում է ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության գործընթացում Գվարդիայի գործառույթների իրականացումը, մասնավորապես՝

ա. ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի իրականացման ապահովումը.

բ. անօրինական զինված խմբավորումների (միավորումների) գործունեության, ահաբեկչական և դիվերսիոն գործողությունների բացահայտման, կանխման և խափանման գործողություններին Գվարդիայի ծառայողների ներգրավումը.

գ. արտակարգ իրավիճակների կանխմանը, հնարավոր հետևանքների նվազեցմանը և վերացմանը, ինչպես նաև մարդկանց կյանքի, առողջության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

դ. համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդության տարածումը կանխելու նպատակով կիրառված անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատշաճ ապահովումը.

ե. հանրային միջոցառումներ իրականացնելու և դրանց մասնակցելու մասով կիրառված սահմանափակման կամ արգելքի պատշաճ ապահովումը.

զ. սահմանված պարետային ժամի ռեժիմի ապահովումը.

է. ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, Գվարդիայի ծառայողների կողմից հատուկ առաջադրանքների կատարումը.

ը. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով նախատեսված այլ միջոցառումների իրականացման ապահովումը.

3) իրականացնում է Գվարդիայի՝ քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելու խնդրի լուծմանն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. համակարգում է Գվարդիայի ծառայողների կողմից դեպքի վայրի պահպանությանն աջակցելու, այդ թվում՝ դեպքի վայրից անձանց հեռացնելու գործընթացը, այդ ուղղությամբ մշակում է աջակցման գործողությունների պլաններ.

4) կազմակերպում և ապահովում է Գվարդիայի ծառայողների մասնագիտական պատրաստության և հմտությունների կատարելագործման գործընթացը.

5) վերլուծության հիման վրա ներկայացնում է Գվարդիայի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

6) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

17. Պետական պահպանության կազմակերպման վարչությունը՝

1) իրականացնում է Գվարդիայի՝ պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությանը, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովմանն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. համակարգում է պահպանվող, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով, օբյեկտների բնականոն գործունեության և անցագրային ռեժիմի ապահովումը.

բ. համակարգում է հատուկ բեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցների ուղեկցման, անհրաժեշտ ուժերի ու միջոցների որոշման գործընթացը.

գ. համակարգում է օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների պաշտպանության իրականացումը, այդ թվում՝ դրանց վրա կատարվող հարձակումներին հակազդելու գործընթացը.

դ. համակարգում է օբյեկտները պահպանության ընդունելուց առաջ դրանց հետազոտման և դրա արդյունքներով, ըստ անհրաժեշտության, օբյեկտների ղեկավարներին կարգադրագրեր ներկայացնելու գործընթացը.

ե. համակարգում է պահպանվող օբյեկտների տեխնիկական ամրացվածության, անվտանգության համակարգերի և հուսալի պահպանության գնահատման գործընթացը.

զ. համակարգում է օբյեկտների պահպանության իրականացման ձևի, օբյեկտների պահպանության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, կայուն պահակետերի, պարեկային խմբերի, վերակարգերի թվաքանակի, տեղակայման վայրերի և երթուղիների որոշման, ինչպես նաև մոնիթորինգի կենտրոնի հետ դրանց փոխկապակցվածության ապահովման գործընթացները.

է. կազմակերպում և համակարգում է օբյեկտների և հատուկ բեռների ուղեկցման հետ կապված փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացը.

2) իրականացնում է Գվարդիայի՝ ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելուն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. կազմակերպում է ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանությունը, ինչպես նաև նյութական արժեքների պահպանությունը.

3) իրականացնում է Գվարդիայի՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելուն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. ապահովում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց ուղեկցումը.

բ. կազմակերպում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց տեղաշարժման երթուղիների և նրանց մասնակցությամբ իրականացվող միջոցառումների վայրերի

անվտանգության ապահովմանը մասնակցությունը, այդ թվում՝ կայուն պահակետերի տեղակայման, երթուղիների սահմանման աշխատանքների կազմակերպման միջոցով.

գ. կազմակերպում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց հարող տարածքներում ավտո կամ հետիոտն պահակետային ծառայության կազմակերպման աշխատանքները.

4) իրականացնում է Գվարդիայի՝ քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելուն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշման կատարումը՝ այդ որոշման հիման վրա կազմակերպելով քրեական վարույթին ներգրավված անձի, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ այլ մերձավոր անձի (պաշտպանվող անձի) պաշտպանությունը.

բ. կարող է անմիջականորեն իրականացնել սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված իրավասությունը.

5) կազմակերպում և իրականացնում է կինոլոգիական ծառայություն.

6) վերլուծության հիման վրա ներկայացնում է Գվարդիայի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

7) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

18. Մոնիթորինգի վարչությունը՝

1) իրականացնում է Գվարդիայի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեության շարունակական մշտադիտարկում (այդ թվում՝ հեռավար կարգով, ինչպես նաև արտագնա պլանավորված կամ հանկարծակի ստուգումների միջոցով), վեր հանված փորձառության հիման վրա կատարում է վերլուծություններ.

2) յուրաքանչյուր հանրային միջոցառման (հավաք, երթ, մարզական ու մշակութային միջոցառում, ընտրություն և այլն) անցկացումից հետո հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման տեսանկյունից վերլուծության է ենթարկում դրա առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ միջոցառման սպասարկմանը ներգրավված Գվարդիայի ծառայողների գործողությունները.

3) վերլուծում է Գվարդիայի ծառայողների գործողությունների համապատասխանությունը ստանդարտացված գործելակարգերին և, շեղումներ հայտնաբերելու դեպքում, ներկայացնում է առաջարկություններ՝ այդ գործելակարգերին համապատասխան իրավակիրառ պրատիկա ձևավորելու ուղղությամբ.

4) Գվարդիայի խնդիրների արդյունավետ իրականացման տեսանկյունից գնահատում է Գվարդիայի պլաններով և մարտավարամասնագիտական փաստաթղթերով նախատեսված գործողությունների և միջոցառումների արդիականությունը, անհրաժեշտությունը, ինչպես նաև Գվարդիայի գործունեության համապատասխանությունը դրանց և այդ փաստաթղթերի կատարելագործման ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.

5) ուսումնասիրում է ստանդարտացված գործելակարգերի համապատասխանությունը կիրառվող պրակտիկային և, գործնականում խնդիրներ հայտնաբերելու դեպքում, ստանդարտացված գործելակարգերի կատարելագործման ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.

6) վերլուծության արդյունքներով, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակում է՝

ա. հանրային միջոցառումների (հավաքներ, երթեր, մարզական ու մշակութային միջոցառումներ, ընտրություններ և այլն) սպասարկման գործընթացի արդյունավետ կառավարման մեթոդաբանություն.

բ. ռիսկայնության բարձր աստիճանի բարդ օպերատիվ իրավիճակներում հատուկ գործողությունների և առաջադրանքների իրականացման մարտավարական մեթոդներ.

գ. պետական պահպանության, այդ թվում՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության իրականացման, հատուկ բեռների ուղեկցման, հատուկ պաշտպանության միջոց կիրառելու որոշման կատարման բնագավառներում արդյունավետ գործելու ուղենիշային ստանդարտներ.

դ. հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) սպասարկման արդյունավետության բարձրացման ուղղությամբ առանձին իրավիճակային սցենարներ, ինչպես նաև գործողությունների տիպային պլաններ.

ե. հարկադրանքի, այդ թվում՝ ուժային միջոցների գործադրման ստանդարտացված գործելակարգերի կատարելագործման առաջարկություններ.

զ. Գվարդիայի ծառայողների բարեվարքության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ ստանդարտացված գործելակարգեր, կարող է ներկայացնել Գվարդիայի ծառայողների վերապատրաստման վերաբերյալ առաջարկություններ.

7) քննարկում է Գվարդիայի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեության և Գվարդիայի ծառայողների լիազորությունների իրականացման վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար

անձանցից, ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստացված, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում համարժեք միջոցներ.

8) հսկողություն է իրականացնում Գվարդիայի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ծառայողների կողմից օրենսդրության պահանջների և կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ և խախտումներ հայտնաբերելու դեպքում զեկուցում է ըստ վերադասության.

9) նախապատրաստում է Գվարդիայի գործունեությանն առնչվող իրավական ակտերի նախագծեր.

10) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

19. Ծառայության ապահովման վարչությունը՝

1) մշակում է սպառազինության, հատուկ տեխնիկայի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների կիրառման մեթոդաբանությունը և, դրան համապատասխան, ապահովում դրանց արդյունավետ և անվտանգ շահագործումը.

2) մասնակցում է նյութատեխնիկական ապահովման ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

3) իրականացնում է Գվարդիայի ծառայողների սոցիալ-հոգեբանական վիճակի գնահատում և համակարգում է սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման գործընթացը.

4) կազմակերպում է հարկադրանքի միջոցների (ֆիզիկական ուժ, հատուկ միջոց, հրազեն, հատուկ տեխնիկա) կիրառման դեպքերում տուժած անձանց անհետաձգելի առաջին բժշկակ.ան և հոգեբանական օգնության ցուցաբերումը.

5) կազմակերպում է Գվարդիայի վարչական շենքերի և դրանց սպասարկման տարածքների պահպանության հերթապահ ծառայությունը.

6) հերթապահության շրջանակներում ապահովում է Գվարդիայի գործունեությանն առնչվող օպերատիվ տվյալների ընդունումը և փոխանցումը.

7) կազմակերպում և իրականացնում է արարողակարգային և մշակութային միջոցառումներ.

8) կազմակերպում է պատվոպահակային ծառայությունը.

9) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

20. Հատուկ սպառազինության և մարտավարության գունդը՝

1) ռիսկայնության բարձր աստիճանի բարդ օպերատիվ իրավիճակներում իրականացնում է հատուկ պատրաստվածություն և մարտավարական հմտություններ պահանջող գործողություններ և առաջադրանքներ, այդ թվում՝ զանգվածային անկարգությունները, ինչպես նաև

հակահիրավական խմբակային այլ գործողությունները խափանելու, զինված դիմադրությունը ճնշելու, զինված հարձակումը խափանելու, զինված անձանց վնասազերծելու, շենքերը, շինությունները, տարածքներն ու այլ օբյեկտները, տրանսպորտային միջոցներն ազատելու շրջանակներում.

2) ներգրավվում է հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովմանը.

3) ներգրավվում է պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև տեղափոխվող հատուկ բեռների վրա կատարվող հարձակմանը հակազդելու գործողություններին.

4) ներգրավվում է հավաքների ազատության ապահովման շրջանակներում Ոստիկանության պարտականությունների կատարմանը.

5) մասնակցում է հակաահաբեկչական գործողությունների իրականացմանը, մասնավորապես՝

ա. հակաահաբեկչական գործողությունների իրականացման շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կատարում է հատուկ առաջադրանքներ՝ ներառյալ հատուկ տեխնիկայի գործադրմամբ.

6) մասնակցում է ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներին, մասնավորապես՝

ա. ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կատարում է հատուկ առաջադրանքներ՝ ներառյալ հատուկ տեխնիկայի գործադրմամբ.

բ. ներգրավվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի ապահովմանը.

գ. ներգրավվում է անօրինական զինված խմբավորումների (միավորումների) գործունեության, ահաբեկչական և դիվերսիոն գործողությունների բացահայտման, կանխման և խափանման գործողությունների իրականացմանը.

դ. ներգրավվում է արտակարգ իրավիճակների կանխմանը, հնարավոր հետևանքների նվազեցմանը և վերացմանը, ինչպես նաև մարդկանց կյանքի, առողջության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացմանը.

ե. ներգրավվում է համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում հանրության համար վտանգավոր վարակիչ

հիվանդության տարածումը կանխելու նպատակով կիրառված անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատշաճ պահպանման ապահովմանը.

զ. ներգրավվում է հանրային միջոցառումներ իրականացնելու և դրանց մասնակցելու մասով կիրառված սահմանափակման կամ արգելքի պատշաճ պահպանման ապահովմանը.

է. ներգրավվում է սահմանված պարետային ժամի ռեժիմի ապահովմանը.

ը. ներգրավվում է ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանության իրականացմանը.

թ. ներգրավվում է նյութական արժեքների պահպանության իրականացմանը.

ժ. ներգրավվում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով նախատեսված այլ միջոցառումների իրականացմանը.

7) հնարավոր զանգվածային անկարգությունների կանխման, կասեցման, ինչպես նաև զինված անձանց վնասազերծման գործողությունների մեթոդաբանության մշակման ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.

8) վերլուծության հիման վրա ներկայացնում է հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման բարելավմանն ուղղված առաջարկություններ.

9) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

21. Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման առաջին և երկրորդ գնդերը՝

1) իրականացնում են հասարակական կարգի պահպանություն և ապահովում հասարակական անվտանգությունը, մասնավորապես՝

ա. իրականացնում են հասարակական վայրերում (փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում, երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում և այլն) պարեկապահակետային ծառայություն.

բ. ապահովում են հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) բնականոն ընթացքը, ինչպես նաև դրանց մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը.

գ. ապահովում են հանցանքների, վարչական իրավախախտումների կանխումը և խափանումը.

2) իրականացնում են հատուկ բեռների ուղեկցում.

3) ներգրավվում են պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև տեղափոխվող հատուկ բեռների վրա կատարվող հարձակմանը հակազդելու գործողություններին.

4) իրականացնում են հավաքների ազատության ապահովման շրջանակներում Ոստիկանության պարտականությունները, մասնավորապես՝

ա. ապահովում են Ոստիկանության ներկայացուցչի ներկայությունը հավաքին.

բ. ապահովում են հավաքի անցկացման վայրից այն անձանց հեռացումը, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը.

գ. ապահովում են հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը.

դ. ապահովում են խաղաղ բնույթ ունեցող հավաքին աջակցելու պարտավորության պատշաճ կատարումը.

ե. վարում են հավաքների կազմակերպիչների հետ բանակցություններ.

5) աջակցում են հակաահաբեկչական գործողությունների իրականացմանը, մասնավորապես՝

ա. հակաահաբեկչական գործողությունների իրականացման շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կատարում են հատուկ առաջադրանքներ՝ իրականացնելով շենքերի, շինությունների, տարածքների և այլ օբյեկտների շրջափակում կամ արգելափակում.

6) մասնակցում են ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումներին, մասնավորապես՝

ա. ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, կատարում են հատուկ առաջադրանքներ՝ ներառյալ հատուկ տեխնիկայի գործադրմամբ.

բ. մասնակցում են ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի ապահովմանը.

գ. մասնակցում են անօրինական զինված խմբավորումների (միավորումների) գործունեության, ահաբեկչական և դիվերսիոն գործողությունների բացահայտման, կանխման և խափանման գործողությունների իրականացմանը.

դ. մասնակցում են արտակարգ իրավիճակների կանխմանը, հնարավոր հետևանքների նվազեցմանը և վերացմանը, ինչպես նաև մարդկանց կյանքի, առողջության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացմանը.

ե. մասնակցում են համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության դեպքում հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդության տարածումը կանխելու նպատակով կիրառված անձնական ազատության իրավունքի սահմանափակման պատշաճ պահպանման ապահովմանը.

զ. մասնակցում են հանրային միջոցառումներ իրականացնելու և դրանց մասնակցելու մասով կիրառված սահմանափակման կամ արգելքի պատշաճ պահպանման ապահովմանը.

է. ապահովում են սահմանված պարետային ժամի ռեժիմը.

ը. մասնակցում են ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանության իրականացմանը.

թ. իրականացնում են նյութական արժեքների պահպանությունը.

7) օժանդակում են քրեական վարույթն իրականացնող մարմիններին, մասնավորապես՝

ա. իրականացնում են դեպքի վայրի պահպանությանն աջակցելու, այդ թվում՝ դեպքի վայրից անձանց հեռացնելու գործընթացը.

8) իրականացնում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելուն ուղղված իրավասություններ, մասնավորապես՝

ա. մասնակցում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց տեղաշարժման երթուղիների և նրանց մասնակցությամբ իրականացվող միջոցառումների վայրերի անվտանգության ապահովմանը.

բ. իրականացնում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց հարող տարածքներում ավտո կամ հետիոտն պահակետային ծառայությունը.

9) վերլուծության հիման վրա ներկայացնում են հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման բարելավմանն ուղղված առաջարկություններ.

10) ներգրավվում են Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

22. Կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության գունդը և պահպանության տարածքային ստորաբաժանումները՝

1) իրականացնում են օբյեկտների պահպանություն, մասնավորապես՝

ա. ապահովում են պահպանվող, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով, օբյեկտների բնականոն գործունեությունը և անցագրային ռեժիմը.

բ. իրականացնում են օբյեկտների պաշտպանությունը, այդ թվում՝ դրանց վրա կատարվող հարձակումներին հակազդումը.

գ. կազմակերպում և իրականացնում են օբյեկտները պահպանության ընդունելուց առաջ դրանց հետազոտման և դրա արդյունքներով, ըստ անհրաժեշտության, օբյեկտների ղեկավարներին կարգադրագրեր ներկայացնելու գործընթացը.

դ. կազմակերպում և իրականացնում են պահպանվող օբյեկտների տեխնիկական ամրացվածության, անվտանգության համակարգերի և հուսալի պահպանության գնահատման գործընթացը.

ե. իրականացնում են օբյեկտների և հատուկ բեռների ուղեկցման հետ կապված փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացը.

2) մասնակցում են ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝

ա. ներգրավվում են ռեժիմային, հատուկ ռեժիմային, հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար առավել վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանությանը, ինչպես նաև նյութական արժեքների պահպանությանը.

բ. ներգրավվում են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքներով նախատեսված այլ միջոցառումների իրականացմանը.

3) օժանդակում են քրեական վարույթն իրականացնող մարմիններին, մասնավորապես՝

ա. ապահովում են քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշման կատարումը՝ այդ որոշման հիման վրա կազմակերպելով քրեական վարույթին ներգրավված անձի, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ այլ մերձավոր անձի (պաշտպանվող անձի) պաշտպանությունը.

4) վերլուծության հիման վրա ներկայացնում են Գվարդիայի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

5) ներգրավվում են Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

23. Հայկական ատոմային էլեկտրակայանի և ռադիոակտիվ թափոնների պահպանության գումարտակը՝

1) իրականացնում է ատոմային էլեկտրակայանի և ռադիոակտիվ թափոնների պահպանությունը և պաշտպանությունը.

2) իր իրավասության սահմաններում ապահովում է ատոմային էլեկտրակայանի բնականոն գործունեությունը, ինչպես նաև ապահովում է տարածքի անցագրային ռեժիմը.

3) ռադիոակտիվ թափոնների տեղափոխման ընթացքում ապահովում է անվտանգությունը.

4) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

24. Ուղեկցող սպայական վաշտը՝

1) ուղեկցում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց.

2) մասնակցում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց տեղաշարժման երթուղիների և նրանց մասնակցությամբ իրականացվող միջոցառումների վայրերի անվտանգության ապահովմանը.

3) կազմակերպում է ավտո կամ հետիոտն պահակետային ծառայություն հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց հարող տարածքներում.

4) օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է այլ ուղեկցումներ.

5) ներգրավվում է Գվարդիայի առջև դրված այլ խնդիրների իրագործմանը:

5. ԳՎԱՐԴԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

25. Գվարդիայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ոստիկանության պետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ Գվարդիայի հրամանատարը:

26. Ոստիկանության պետը՝

1) օրենքով նախատեսված դեպքերում հրաման է արձակում հատուկ տեխնիկայի գործադրման մասին.

2) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Գվարդիայի հրամանատարի, նրա տեղակալների և Գվարդիայի ստորաբաժանումների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

3) Գվարդիայի գործունեության վերաբերյալ հարցերի քննարկման և առանձին ընթացիկ խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, որոշել դրանց գործունեության շրջանակները.

4) սահմանված կարգով Ներքին գործերի նախարարի քննարկմանն է ներկայացնում Գվարդիայի գործունեությանն ու աշխատանքի կազմակերպմանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր և առաջարկություններ.

5) լսում է Գվարդիայի գործունեության արդյունքները և Գվարդիայի գործունեության կատարելագործման նպատակով տալիս է հանձնարարականներ.

6) իր իրավասության սահմաններում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Գվարդիայի ծառայողներին.

7) օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդություններ է ներկայացնում Գվարդիայի ծառայողներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.

8) իր իրավասության սահմաններում խրախուսում և կարգապահական տույժի է ենթարկում Գվարդիայի ծառայողներին.

9) իրականացնում է օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

27. Գվարդիայի հրամանատարը՝

1) պատասխանատու է Գվարդիայի գործունեության նպատակին հասնելու, խնդիրների լուծման և լիազորությունների իրականացման համար.

2) իր գործունեության համար անմիջականորեն հաշվետու է Ոստիկանության պետին.

3) իր իրավասության սահմաններում ընդունում է անհատական իրավական ակտեր, տալիս պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ և հրամաններ, այդ թվում՝ իր իրավասության սահմաններում հրաման է արձակում հատուկ միջոցների գործադրման մասին.

4) իր տեղակալների միջև բաշխում է համակարգման ոլորտները.

5) իր իրավասության սահմաններում ներկայացնում է Գվարդիան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում, մասնակցում է Գվարդիայի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը.

6) Ոստիկանության պետի քննարկմանն է ներկայացնում Գվարդիայի գործունեությանը վերաբերող առաջարկներ, Ոստիկանության պետի հանձնարարականների և հրամանների նախագծեր.

7) իր իրավասության սահմաններում Գվարդիայի հրամանատարի տեղակալներին և Գվարդիայի ստորաբաժանումների ղեկավարներին (հրամանատարներին) է փոխանցում Ոստիկանության պետի հանձնարարականները, ապահովում է դրանց կատարումը և արդյունքների մասին զեկուցում է Ոստիկանության պետին.

8) Ոստիկանության պետին է ներկայացնում Գվարդիայի գործունեության արդյունքները.

9) իր իրավասության սահմաններում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Գվարդիայի ծառայողներին.

10) օրենքով սահմանված դեպքերում և կարգով միջնորդություններ է ներկայացնում Գվարդիայի ծառայողներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.

11) իր իրավասության սահմաններում խրախուսում և կարգապահական տույժի է ենթարկում Գվարդիայի ծառայողներին.

12) հաստատում է Գվարդիայի գործունեության պլանները, մարտավարամասնագիտական և այլ փաստաթղթերը.

13) իրականացնում է օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

28. Գվարդիայի հրամանատարն ունի տեղակալներ, որոնք հսկողություն են իրականացնում իրենց համակարգման ներքո գտնվող՝ Գվարդիայի լիազորությունների պատշաճ կատարման նկատմամբ: Գվարդիայի հրամանատարի տեղակալները անմիջականորեն հաշվետու են Գվարդիայի հրամանատարին: Գվարդիայի հրամանատարի տեղակալն իր իրավասության սահմաններում հրաման է արձակում հատուկ միջոցների գործադրման մասին:

29. Գվարդիայի ստորաբաժանումների աշխատանքները կազմակերպում և ղեկավարում են տվյալ ստորաբաժանումների ղեկավարները (հրամանատարները), որոնք հաշվետու են իրենց անմիջական ղեկավարին (հրամանատարին): Գվարդիայի իրավասու ստորաբաժանման հրամանատարն իր իրավասության սահմաններում հրաման է արձակում հատուկ միջոցների գործադրման մասին:

30. Գվարդիայի հրամանատարի ժամանակավոր բացակայության դեպքում նրան, Ներքին գործերի նախարարի հրամանով, փոխարինում է Գվարդիայի հրամանատարի տեղակալներից մեկը: